ՀԵՆՐԻԿ ԲԱԽՉԻՆԵԱՆ
Բանասիրական գիտ. դոկտոր

Ս. ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑՈՒ ՆԵՐԲՈՂԵԱՆՆԵՐԸ ԵՒ ՆՐԱՆՑ ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ ԴՐՈՒԱԳՆԵՐԸ

Ս. Գրիգոր Նարեկացին հեղինակել է չորս ներբողական երկեր, որոնք կոչել է «ներբող», «գովեստ», «ներբողենի ճառ», «ճառ դրուատի», «ներբողեան գովեստի»[1]։ Դրանք պատկանում են ճարտասանական-գեղարուեստական արձակի մի տեսակին՝ ներբողեանին։

Մինչեւ Նարեկացին, Ոսկեդարից սկսած, ներբողեանի ժանրով գրուել են բազմաթիւ գործեր. մեծարժէք են յատկապէս Մովսէս Խորենացու՝ Հռիփսիմեան կոյսերին եւ Դաւիթ Քերթող-Քերականի՝ Սուրբ Խաչին նուիրուած ներբողեանները[2]։ Ներբողեան է հեղինակել նաեւ Գրիգոր Նարեկացու ուսուցիչ Անանիա Նարեկացին[3]։ Իւրացնելով իր նախորդների փորձը եւ հետեւելով ներբողեանի կանոններին, որոնք առկայ են «Պիտոյից գրքում»[4] եւ Թէոն Ալեքսանդրացու «Յաղագս ճարտասանական կրթութեանց» երկում[5], Գրիգոր Նարեկացին ստեղծել է հայ ներբողագրութեան լաւագոյն նմուշները։

---

[1] *Տե՛ս «Մատենագիրք Հայոց», ԺԲ, Ժ դար, Գրիգոր Նարեկացի, Երեւան, 2011, էջ 930–1005։ Մէջբերումներն՝ այստեղից, ՄՀԺԲ յապաւումով եւ համապատասխան էջի (էջերի) նշումով։*

[2] *Տե՛ս* Մովսէս Խորենացի, *Պատմութիւն սրբոց Հռիփսիմեանց, «Մատենագիրք Հայոց», Բ, Անթիլիաս-Լիբանան, 2003, էջ 2193–2196։ «Կորիւն վարդապետի, Մամբրէի Վերծանողի եւ Դաւիթ Անյաղթի մատենագրութիւնք», Վենետիկ, 1833, էջ 101–119։ Դաւիթ Քերթող-Քերականի այս երկը դեռեւս միջնադարում թիւրիմացաբար վերագրուել է Դաւիթ Անյաղթին, մինչդեռ այն ժամանակ, երբ գահակալել է երկի պատուիրատու Գիւտ Արահեզացին, Դաւիթ Անյաղթը կա՛մ դեռեւս չէր ծնուել, կա՛մ եղել էր երկու-երեք տարեկան։*

[3] *Տե՛ս «Մատենագիրք Հայոց», Ժ, Երեւան, 2011, էջ 619–646։*

[4] *Տե՛ս «Գիրք պիտոյից», քննական բնագիրը, առաջաբանը եւ ծանօթագրութիւնները Գ. Մուրադեանի, Երեւան, 1993։ «Պիտոյից գիրքը» եղել է անտիկ ճարտասանութեան հիմնական դրոյթներն ամփոփող ուսուցարան։ Գրքի թարգմանութիւնը յունարէնից, ինչպէս նաեւ որոշ յաւելումներ վերագրւում են Մովսէս Խորենացուն (այս կապակցութեամբ տե՛ս* Մ. Աբեղեան, *Երկեր, հտ. Գ, Երեւան, 1968, էջ 302,* С. С. Аревшатян, Формирование философской науки в древней Армении (V–VI вв.), Ереван, *1973,* стр. *18, 148–149, 160–162,* Ա. Ղաջինեան, *Ներբողը հայ հին գրականութեան մէջ, «Հայ միջնադարեան գրականութեան ժանրեր», Երեւան, 1984, էջ 130։*

[5] *«Թէովնեայ Յաղագս ճարտասանական կրթութեանց», Երեւան, 1938, էջ 130։ Թէոն Ալեքսանդրացու այս երկը եւս հայերէն է թարգմանուել 5-րդ դարում։*

Նարեկացու ներբողեաններից երկուսն առընթեր են «Պատմութիւն Ապարանից Սուրբ Խաչին» երկին, որն, ըստ խորագրի եւ ենթախորագրի, պատմութիւն *է,* յիշատակագրութիւն *(«Յիշատակագրութիւն պատմութեան ամենազօր Նշանի աստուածեան Խաչին»), այլեւ, ըստ այդ գործի հեղինակային յիշատակարանի, «պատմութեանն գովեստ» է*[6]*, այսինքն՝ պատմութեան, պատմական անցքի յիշատակագրման եւ գովեստ-ներբողի համադրութիւն։ Այստեղ գովերգաբար նկարագրուած է 983 թուականին տէրունական խաչի մի մասունքի հանդիսաւոր տեղակայումը Մոկաց աշխարհի Ապարանքի Սուրբ Խաչ (Սուրբ Նշան) վանքի նորակառոյց Սուրբ Աստուածածին եկեղեցում։ Խաչի մասունքը Վասիլ կայսրից նուէր էր ստացել վանքի առաջնորդ Ստեփանոս եպիսկոպոս Ապարանեցին (Մոկացի), որը եւ խնդրագիր թղթով պատուիրել է Նարեկացուն գրել Ապարանից խաչի պատմութիւնը։ Վերջինս կատարել է պատուէրը՝ գրելով նաեւ Պատմութեան յարակից երկու ներբողեանները՝ ձօնուած սուրբ Խաչին եւ Սուրբ Կոյսին։ Առաջինը վերնագրուած է. «Առընթեր գրութիւն սակաւ սոփեստիս յարկացեալ հիւթի զներբողենիս ճառ լուսոյ Խաչի», երկրորդը՝ «Ի սոյն կարգ դասեալ իբր զմիաշար խորհրդոյ տեսակ ընդ ներբողենի Խաչիդ եւ զգովեստ երգոյ Տիրուհւոյդ»։ Սրանք* փառաբանական-օրհնաբանական ներբողեաններ *են։*

Ապարանքի Խաչի պատմութիւնն ու առընթեր ներբողեանները, Պ. Խաչատրեանի բնորոշմամբ, «կազմում են գրական մի իւրօրինակ եռապատկեր, հարեւնման միջնադարի քրիստոնէական արուեստում տարածում գտած տրիպտիխին, ոչ միայն նրանով, որ միմեանց հետ թեմատիկ միասնութեան մէջ են, այլեւ շնորհիւ այն բանի, որ գեղարուեստական մէկ հաւաք ու ամբողջական մտայղացման արդիւնք են եւ աւարտւում են նրանց բոլորին վերաբերող հեղինակային մէկ ընդհանուր յիշատակարանով»[7]*։ Այս եռագրութիւնն, ըստ ուսումնասիրողների, գրուած է 985 կամ 987 թուականին եւ վերամշակուած 990-ական թուականների կէսերին*[8]*։*

Նարեկացու երրորդ ներբողեանը նուիրուած է Քրիստոսի առաքեալներին եւ աշակերտներին. վերնագրուած է. «Ներբողեան գովեստի

---

[6] *Տե՛ս* Մ Հ Ժ Բ, *913, 974։ Յիշատակարանը եւ երկու ներբողեանները յայտնի են երկու տարբերակներով։ Այս կապակցութեամբ տե՛ս նաեւ* Ա. Ղազինեան, *Գրիգոր Նարեկացի. բանաստեղծական արուեստը, Անթիլիաս-Լիբանան, 1995, էջ 106–107։*

[7] Պ. Խաչատրեան, *Գրիգոր Նարեկացին եւ հայ միջնադարը, գիրք առաջին, Ս. Էջմիածին, 1996, էջ 81–82։*

[8] *Տե՛ս* Գ. Ահեցիքեան, *Սրբոյ հօրն մերոյ Գրիգորի Նարեկացւոյ երկրորդ մատեան ճառից, Վենետիկ, 1827, էջ 7–8,* Պ. Խաչատրեան, *Գրիգոր Նարեկացին եւ հայ միջնադարը, էջ 91։*

ասացեալ ի համօրէն գունդս Առաքելոցն երկոտասանիցն՝ նախապատիւ պետութեանցն գլխաւորոց, եւ եւթանասուն եւ երկուցն սրբազան աշակերտացն Քրիստոսի»։ Ենթադրուած է, որ գրուել է եռագրութիւնից յետոյ եւ Աղօթամատեանից առաջ[9]։ Սա գովաբանական-դրուատական ներբողեան *է։*

Չորրորդ ներբողեանը Նարեկացին ձօնել է Յակոբ Մծբնացի հայրապետին եւ վերնագրել «Ի մեծ եւ յերջանիկ հայրապետն ի սուրբ Յակոբ եպիսկոպոս եւ վերադիտող սկզբնատիպ երկնայանգէտ աթոռոյ Մծբին քաղաքի»։ Այս ներբողեանը, Պ. Խաչատրեանի հաւանական ենթադրութեամբ, այդ ժանրի ասպարէզում «Նարեկացու առաջին փորձերից է, միւսներից աւելի վաղ գրուած»[10]։ Սա վարքագրական-սրբախօսական ներբողեան *է։*

Նարեկացու ներբողեանները, զարմանալիօրէն, բաւականին ցածր է գնահատել Մանուկ Աբեղեանը, իբրեւ գրական-գեղարուեստական գործեր։ «Հին ճառերի ու ներբողեանների երկարաբան արուեստակեալ լեզուն ու ճոռոմ արտայայտութիւնը, — գրում է նա, — գտնում ենք եւ Նարեկացու մէջ։ Ներբողեանների մէջ կար եւ քնարական մաս, որի մէջ կէս բանաստեղծական եւ կէս ճարտասանական ձեւով գովաբանւում էր ներբողելի անձը. այստեղ արդէն մեր բանաստեղծն ազատ է զգում իրեն, եւ նրա ներբողեաններն այս մասի մէջ դառնում են երբեմն օրհնաբանական բանաստեղծութիւններ, նոյնիսկ ոտանաւորով յօրինուած։ Բայց ինչպէս էլ լինի, դրանք իսկական բանաստեղծական ներշնչման արդիւնք չեն, այլ յօրինուած են ուսուցողական նպատակով»[11]։ Իրականում, ինչպէս կտեսնենք, այդպէս չէ։

Ներբողեանի ժանրային պահանջով, այդ կարգի գործերը յօրինուել են ճարտասանական արուեստի կանոններով, պատկերաւոր լեզուով ու յուզականութեամբ եւ հանդիսանում են ժամանակի գեղարուեստական առձակի նմուշներ։ *Դրանք, ինչպէս առհասարակ ճարտասանական երկերը, յաճախ օժտուած են լինում քերթողական այնպիսի յատկանիշներով, որոնք նրանց* մերձեցնում են բանաստեղծութեանը։ *Նարեկացու ներբողեանները լինելով հանճարեղ հեղինակի գրչի արգասիք, օժտուած են առաւել գունագեղ պատկերներով եւ անհամեմատ աւելի խոր*

---

[9] *Տե՛ս* Գ. Աւետիքեան, *Նարեկլուծ, Վենետիկ, 1827, էջ 434,* Պ. Խաչատրեան, *Գրիգոր Նարեկացին եւ հայ միջնադարը, էջ 87։*

[10] Պ. Խաչատրեան, *Գրիգոր Նարեկացին եւ հայ միջնադարը, էջ 87։*

[11] Մ. Աբեղեան, *Երկեր, հտ. Գ, էջ 582։*

յուզական լիցքով։ Այդպէս է շարադրուած նաեւ եռագրութեան հիմքը հանդիսացող «Պատմութիւն Ապարանից Սուրբ Խաչին» պատմական-գովերգական գրուածքը։ Ղեւոնդ Ալիշանի բնորոշմամբ, «Սա գերաթռոյց պատմուածն է, կարծես թէ ոչ միայն մտօքն (իմաստիւք), այլեւ շարաբանութեամբն թռչի եւ անկարելի կընէ զկարգն եւ թարգմանել հաւասար բարձրութեամբ եւ խորութեամբ. հարկ է ընթերցողին անոր գծած օդային ճամբուն մէջէն նոյնպէս թռչտելով հետեւել որչափ կարենայ»[12]։

Շարունակելով Ալիշանի «նուրբ դիտողութիւնը», Մկրտիչ Մկրեանը նկատել է, որ Ապարանքի Խաչի պատմութեան մէջ ուժեղ է Նարեկացու «հռետորական թափը», «շատ են պատկերաւոր արտայայտութիւնները, գունագեղ նորաստեղծ բառերը», լեզուի մէջ «ուժեղ ռիթմ ու դինամիկա կայ», լեզուի ընձեռած միջոցներն ու հնարքները պատմական շատ սովորական անցքի նկարագրութիւնը վերածում են «նկարչական եւ երաժշտական մի բազմերանգ ներդաշնակութեան, որով Պատմութիւնը տեղ-տեղ փաստօրէն վերածւում է բանաստեղծութեան»[13]։ Գրականագէտը յատկապէս նշել է Նարեկացու կիրառած բաղաձայնների յանգիտութիւնը, «որի ամենամեծ վարպետն է նա մեր գրականութեան մէջ»։ Ասենք, սակայն, որ յանգիտութիւնը բնորոշ է նաեւ ճարտասանական արուեստին, ուստի այստեղից չպիտի եզրակացնել, թէ դրա շնորհիւ այդ երկում «հռետորական արուեստը վերաճում է բանաստեղծական արուեստի»[14]։ Յաւելենք, որ ճարտասանական գործերի որոշ հատուածներին, ինչպէս քնարերգութեանը, բնորոշ են նաեւ բառային, քերականական ու շարահիւսական միաւորների կրկնութիւններով առաջացող ռիթմը, երաժշտականութիւնը, յանգեր յիշեցնող բառային վերջաւորութիւնների կրկնութիւնները, անգամ բանակապը։ Ուստի նման հատուածները ճիշտ չէ բերել տողատուած, իբրեւ բանաստեղծական նմուշներ։

Այսուհանդերձ, քննուող գովերգական Պատմութեան մէջ Նարեկացին ստեղծել է իսկապէս բանաստեղծական հետեւեալ դրուագը՝ գերիշխող հնգավանկ չափով եւ -ացյանգով.

Եւ հետքս շաւղաց
երթեւեկութեանց
փայտակերտ լաստաց՝

---

[12] Ղ. Ալիշան, *Հայապատում*, Վենետիկ, 1901, էջ 88։
[13] Մ. Մկրեան, *Գրիգոր Նարեկացի*, Երեւան, 1955, էջ 134։
[14] *Նոյն տեղում*, էջ 135։

անխարիսխ յարկաց
եւ անշունչ կառաց,
գերագոյն դիմաց,
երկնագոյն դաշտաց,
լուծական լերանց,
անկայուն յատակաց
ի կոյտս կոհակաց,
կապոյտ կուտակաց,
իբր ի թռիչս օդոց
ի թեւրս թեթեւս
եւ յարագընթաց
ամպաչու թռչնոյ
երկթեւեան կենդանւոյ
զամենեքումբք անցեալ տիրեցին։
(ՀՄԺԲ, 914–915)։

Պատմութեանն առընթեր երկու ներբողեաններում չափածոյ դրուագների ներմուծումն, ինչպէս կտեսնենք, Նարեկացին դարձրել է սկզբունք։ Այդ գործերը, յիրաւի, նախորդ ներբողագրութեան համեմատ, «իրենց բնոյթով աչքի ընկնող նորութիւններ են», քանի որ գրուած են հեղինակի «նուրբ եւ հարուստ անձնական խոհերի եւ արտայայտչական միջոցների» մեծ բազմազանութեամբ[15]։ Ա. Ղազինեանը եւս նկատել է, որ Նարեկացու ներբողեաններին «բնորոշ է փիլիսոփայական խորհրդածութիւնների ոգին», որ նա «խոհական իմաստասիրական երանգ տուեց իր ներբողներին»[16]։ Դրանց մէջ առկայ է «գեղեցիկ մակդիրների եւ փոխաբերութիւնների մի շքեղ շղթայ, ուր հնչիւնական հարուստ յանգիտութիւնն արտակարգ երաժշտականութիւն է հաղորդում խօսքին, որը յաճախ վերածւում է կանոնաւոր ռիթմիկ հիւսուածքի, երբեմն էլ՝ յանգաւոր բանաստեղծութեան»[17]։

* * *

Եռագրութեան առաջին՝ Խաչի ներբողեանում Նարեկացին ձգտել է պատկերաւոր լեզուով լաւագոյնս ներկայացնել Խաչի խորհուրդը՝

---

[15] *Նոյն տեղում, էջ 136։*
[16] *Նոյն տեղում, էջ 157–158։*
[17] *«Հայ միջնադարեան գրականութեան ժանրեր», էջ 157։*

դրսեւորելով գեղագէտ ճարտասանի իր անսպառ ունակութիւնները։ Նա այստեղ տուել է «բնութեան անձնաւորման» առաջին օրինակներից մէկը, որտեղ մի ինքնօրինակ ծաւալուն համեմատութեան մէջ «արդէն նշմարւում է բնութեան այն զգացողութիւնը, որ այնպէս զեղուն դրսեւորուել է Նարեկացու մի քանի տաղերի մէջ»[18]։ Ահա ծառերի խորհրդաբանութեամբ նրա կերտած պատկերը.

«Զքեզ համբաւեալ զանփոտն փայտից ի քումդ անեղծութիւն՝ զմայրն ընդ նոճոյն եւ զսարդն ընդ սօսոյն, ի պատճառ փառաց մեծին Աստուծոյ վերանուագեաց»։ *(ՀՄԺԲ, 936)*

Խաչը ներբողելիս Նարեկացին կիրառել է իր համակարգած խորհրդաբանութիւնը։ Այսպէս մի դրուագում նա ասել է. «Տէրն երկրի եւ երկրի ի բարձրն դիտանոց կառուցեալ ի մէջ ստորինս վայրի, եւ եւս յաւէտ անտի ամբարձեալ» (ՀՄԺԲ, 943)։ Իր տաղերում եւս նա խաչը խորհրդանշել իբրեւ դէտ-դիտանոց *եւ* լեառն դիտարան[19]։

Ներբողեանում առկայ է մի ծաւալուն օրհնաբանական հատուած, որի դրուագների սկզբնատառերով յօդւում է հայկական այբուբենը։ Սա Ա. Ղազինեանը, վրիպելով, համարել է չափածոյ *օհնութիւն*[20]։ *Գրականագէտը յատկապէս հենուել է Նարեկացու հետեւեալ խօսքի վրայ. «Այլ մեք ի կշիռս չափոց զօրութեան մերոյ կենդանարար նշանի աստուածեան խաչիս ձայնեսցուք ձայն մաքուր ընծայից եւ քաղցրացուսցուք բարբառ բանից օրհնութեան» (ՀՄԺԲ, 935)։ Այստեղ, սակայն, հեղինակը «ի կշիռս չափոց» ասելով՝ նկատի չունի չափաբերուած, չափածոյ խօսքը։ Ասուածի իմաստն այլ է. «Իսկ մենք մեր Աստուածային խաչի կենարար նշանի զօրութեան* կշռի չափերին համապատասխան[21] *ձայնենք մաքուր ընծաների ձայնով եւ քաղցրացնենք՝ օրհնութեան խօսքեր բարբառելով»։*

Բերենք ներբողեանի այդ օրհնութեան մի դրուագը, որտեղ Նարեկացին կիրառել է իր նախասիրած ճարտասանական-բանաստեղծական հնարանքներից մէկը՝ նմանաձայն բառերի կուտակումները.

«Դրուատեալ ես, սուրբ, պանծալի նշա՛ն հրաշազան Խաչիդ, որ ի դրութեան դիմակացն քառակուսեան լծորդացն զուգակշիռ հետեւմամբ,

---

[18] *Նոյն տեղում, էջ 160–161։*

[19] *Տե՛ս* Հ. Բախչինեան, *Գրիգոր Նարեկացու Գանձարանը, էջ 47, 78։*

[20] *Տե՛ս* Ա. Ղազինեան, *Գրիգոր Նարեկացի. բանաստեղծական արուեստը, էջ 108։*

[21] *Նոյն այս իմաստով է «ի կշիռ չափոյ» բառակապակցութիւնը գործածուած նաեւ յաջորդ ներբողեանում (տե՛ս ՀՄԺԲ, 961)։*

անկարօտաաեմ ճախրանօք, բազմատեսակ յոքնաչեայ քրովբէական սերափին սիրասուր սլացմամբ, սխրասարաս սաւառմամբ, անսայթաքական սիգանօք, իբր զքոյդ ճշմարտեալ սքանչելատեսիլդ երեւումն կանուխ յայտնութեամբ, անիւ ի յանուի, ըստ դրութեան՝ խաչիդ անփոխադիր տեսակ...» *(ՄՀԺԲ, 935)*

Սա, յիրաւի, չափածոյ խօսք չէ։ Մ. Մկրեանի կարծիքով. «Նարեկացու բոլոր դրուագներն էլ, որոնք չեն գրուել յատկապէս իբրեւ չափածոներ, շնորհիւ խօսքի ուժեղ ռիթմի կարելի է հեշտութեամբ տողատել, մանաւանդ որ նա յաճախ է կիրառում ճարտասանական այնպիսի հնարքներ, որոնք ինքնըստինքեան շարադրանքը չափածոյ են դարձնում»[22]։ Ասուածն ապացուցելու համար գրականագէտի բերած օրինակները, համոզիչ չեն։ Անշուշտ, ուժեղ ռիթմով հիւսուած հատուածները «կարելի է հեշտութեամբ տողատել», սակայն այդպէս չպէտք է վարուել, քանի որ դրանք, Աբեղեանի խօսքով ասած, «ազատ ռիթմական կամ գեղարուեստական պրոզայ են»[23]։ Այդպիսին են նաեւ Նարեկի որոշ գլուխներ[24]։

Բանաստեղծական չափաբերուած խօսքը, Աղօթամատեանի, գանձերի ու տաղերի պարագայում, Նարեկացին կոչել է երգ *(ուղղակի կամ տարբեր ածանցումներով ու բառաբարդումներով) կամ* նուագք։ *Այսպէս, գանձերի յօդակապերում նա դրանք պարզապէս կոչել է* երգ *(«Գրիգորի երգ»)։ Նոյն այդ ժանրանունով է կոչել նաեւ իր տաղերը. այդ է վկայում «Գունդք սուրբ վկայիցն» տաղի բանակապը («Գրիգորի* երգս *այս»)[25]։ Իր Աղօթամատեանն էլ Նարեկացին կոչել է* ողբերգութիւն, *ողբոց* երգութիւն, *այն է աղօթական ողբերի* երգ։ *Մատեանի ԺԲ. Բանում (տող 44) առկայ է «*երգ *հառաչման» բնութագիրը, նոյն Բանի 89-րդ տողում՝ «*երգակցեալ» *ձեւը։ Իսկ Գ. Բանում (տող 48) հեղինակն իր երկը կոչել է «մատեան ողբոց* նուագի», *ԻԸ. Բանում (տող 109)՝ «ողբերգութեան ձայնի այսմ արտօսրածին* նուագի», *ՀԵ. Բանում (տող 8)՝ «*նուագ *ձայնի հեծութեան»։*

Ինչպէս Խաչի Պատմութեան մէջ, իր բոլոր ներբողեաններում Նարեկացին, որպէս նորամուծութիւն, ստեղծել է իսկապէս չափածոյ դրուագներ՝ բանաստեղծական ազատ կամ կանոնաւոր չափերով։ Այդ

---

[22] Մ. Մկրեան, *Գրիգոր Նարեկացի, էջ 139։*

[23] Մ. Աբեղեան, *Երկեր, հտ. Գ, էջ 617։*

[24] *Նարեկի ակադեմիական հրատարակութեան կազմողներն արձակ են ներկայացրել ՀԵ, ՂԲ, ՂԳ Բանները եւ ԼԴ Բանի մեծ մասը (տե՛ս* Գրիգոր Նարեկացի, *Մատեան ողբերգութեան, աշխատասիրութեամբ Պ. Խաչատրեանի եւ Ա. Ղազինեանի, Երեւան, 1985, էջ 385–390, 546–554, 612–636)։ Կարելի էր արձակ ներկայացնել նաեւ որոշ այլ հատուածներ եւս։*

[25] *Տե՛ս* Հ. Բախչինեան, *Գրիգոր Նարեկացու Գանձարանը, էջ 63–64։*

դրուագները, որոնք, ըստ երեւոյթին երգուել են, հեղինակը դարձեալ նշել է երգ *կամ* նուագք *ցուցիչներով։*

Խաչի ներբողեանի չափածոյ դրուագի առաջին տողում էլ, ահա, Նարեկացին գործածել է նուագք *եզրոյթը։ Այստեղ եւս գերիշխում է Աղօթամատեանին բնորոշ հնգավանկ չափը, որոշ տողեր նաեւ յանգաւորուած են։ Ահա այդ հատուածը.*

Սովին *նուագօք* յաւէտ մաքրելովք
եւ մատուցելովք նուիրականօք
պատարագելովք եւ ընտրեցելովք
գովեալ ես ի սահման անաւարտ
եւ անստուեր յաւիտենին,
Նըշա՛ն պայծառափառ,
որ յայլայլութիւն յելյելման եռակըշռեան
շարժութեանս ի զանազան մասունքս ձեւոյ
երեւութացար, մինչեւ ծանուցար
ի ստուերին առակ իր ճըշմարտական։
Եւ արդ, դու միայնակ
Լուսոյ ընդունակ,
ի փառացն անքակ,
երկրի երեւակ,
մեծ շնորհաց գըտակ,
ծագմանըն դիտակ,
Արարչին խօսնակ,
վեհին աշտարակ,
ի յաւուրս եօթնեակ ժամանակ
ձրգտեալ ձրգիս ի բարձունս՝
ի տես հայեցման ամենայն մարդկան
ի յօր գալըստեան անմահ Արքային։
(ՄՀԺԲ, 940)

Ինչպէս այս, այնպէս էլ միւս ներբողեանների բանաստեղծական դրուագները, ժանրային առումով, ներբողական բանքեր *են, որպիսիք առկայ են նաեւ Ողբերգութեան մատեանում։ Դրանք եւս, ինչպէս Նարեկացու գանձերն ու Աղօթամատեանի հիմնական մասը, հարում են* ճարտասանական բանաստեղծութեանը։

Նարեկացին Խաչին նուիրել է գանձ եւ տաղեր։ Խաչի ներբողեանում առկայ վերոբերեալ բանաստեղծական դրուագն, ահա, համալրում է նրա խաչերգութիւնը եւ հանդիսանում է Խաչին ձօնուած մեր առաջին ներբողական բանը։

* * *

Եռագրութեան միւս ներբողեանը՝ նուիրուած Մարիամ Աստուածածնին, Նարեկացու այդ ժանրի լաւագոյն գործն է եւ հայ ներբողագրութեան գլուխգործոցը։ Հեղինակն ինքը իր այս ներբողեանը բարձր է գնահատել, յիշատակել է այն Ողբերգութեան մատեանում՝ Աստուածամօրը նուիրուած գլխում, ասելով.

Ընկա՛լ զմաղթանս այսր աղերսանաց Քում դաւանողիս
եւ մատո՛, ընծայեա՞ ընդ սրմին խառնեալ
ըզբանն իմ նախնի Մեծիդ ներբողի ի Քոյդ պաղատանս...
(Բան Զ, 21)։

Ներբողեանում հանճարեղ հեղինակը գործի է դրել իր շքեղ բառագանձը, հոմանիշների եւ իմաստամերձ բառերի կուտակումները, պատկերաւորման ու արտայայտչական միջոցները՝ ստեղծելով ճարտասանական-գեղարուեստական արձակի մի իսկական հրաշակերտ։ «Երանեալ ես», «Խրախացի՛ր», «Ուրախացի՛ր» եւ նման ճարտասանական դիմումներով սկսուող պարբերութիւններում նա երփնագրում է Սուրբ Կոյսի լուսէ պատկերը։ Ահա մի հատուած, որտեղ հանդիպադրուած են Աստուածամօր եւ Աստուածորդու էանիշ-խորհրդանիշները՝ ըստ իր իսկ, Նարեկացու խորհրդաբանական համակարգի.

«Սուրբ Աստուածածի՛ն, Երկի՛ր անձնական բանական Բուսոյն, եւ զգայական Անդաստա՛ն կենացն Հացի, եւ Վառարա՛ն բորբոման անշէջ Կայծականն, եւ Վա՛յր դալարաբեր ծոցածին Ծաղկին, եւ Ծա՛ռ երկնուղէշ անթարշամ խնձորոյն, եւ Գործարա՛ն գոյութեան լուսոյ Մարգարտին, եւ Լեա՛ռն արձանունակ երկրալիր Վիմին, եւ Ա՛յգ արփիասկիզբն Աստեղն առաւօտին, եւ Յա՛րկ Դիտապետին բանական հօտին, եւ Արքայարա՛ն լուսակերտ անմահ Թագաւորին, եւ Մա՛յր կաթնամատոյց բնաւից Ստացողին, եւ Հա՛ռսն սրբուհի Հօրն Քրիստոսի»։ *(ՄՀԺԲ, 954)*

Այս ներբողեանում, Մ. Մկրեանի բնորոշմամբ, «Նարեկացու լեզուն ու ոճը յիշեցնում են իր ժամանակի ճարտարապետական հրաշակերտների

մանուածոյ զարդաքանդակները, այդ մանուածոների հիւսուածքի ապշեցուցիչ սրամտութիւնները եւ զուարթացնող, ոչ յոգնեցնող բարդութիւնները։ Այս լեզուն եւ ոճն է, որ յետոյ կատարելութեան հասնելով «Ողբերգութեան մատեանի մէջ», գերազանցեց ճարտարապետների պլաստիկ երեւակայութեան բոլոր անսպասելիութիւններին միասին վերցրած»[26]։ Մկրեանը, որպէս Աստուածածնի հոգեւոր ու մարմնաւոր գեղեցկութիւնների պատկերման օրինակ, բերել է ներբողեանի հետեւեալ շէնշող հատուածը՝ տողատելով այն. մինչդեռ այս դէպքում եւս, ռիթմական ճարտար յօրինուածքի շնորհիւ, ունենք բանաստեղծութեանը մերձեցող, բայց բանաստեղծութեան չվերածուող ճարտասանական-գեղարուեստական արձակի նմուշ, որտեղ դարձեալ գործում է նարեկացիական խորին խորհրդաբանութիւնը.

«Ի մարդկային զարմէ Հրեշտա՛կ երկնային, յեղծականաց սեռիցս անմահ Սերովբէ՛, ի նիւթոյ հողոյ ոսկւոյ Մաքրութի՛ւն, ի ծովային բերմանց լուսոյ Մարգարի՛տ, ի Յեսսեան բուսոյ Պտո՛ւղ քաղցրութեան, ի յաւուրս նախնեացն Ճի՛ւ օրհնութեան, Յօղոյն հանդարտի Ա՛մպ անձրեւաձիր, Արեւուն ծագման Ա՛կն արփիափայլ, մերկացելոյ Այգոյն Ա՛ստղ առաւօտի, գիշերային մթոյն խօսնա՛կ բերկրանաց, օրինի ստուերին Տա՛ւ ճշմարտանաւ»։ *(ՄՀԺԲ, 958)*

Այս հատուածը Ա. Ղազինեանը եւս, մեզ համար անընդունելի կերպով, մէջ է բերել տողատուած[27], գտնելով, որ Աստուածածնի ներբողեանը, Նարեկացու ստեղծագործական տարերքի անկեղծ ու ջերմ յորդման շնորհիւ, վերաճել է «Ճշմարիտ եւ բարձրարուեստ բանաստեղծութեան»[28]։ Ուշագրաւ է գրականագէտի կատարած համեմատութիւնը 7-րդ դարի ճարտասան Թէոդորոս Քռթենաւորի եւ Նարեկացու Մարիամ Աստուածածնին ձօնած ներբողեանների միջեւ։ Համոզիչ է այն եզրայանգումը, թէ «Նարեկացին զգում է պատկերներով, Քռթենաւորը մտածում է վերացական մտակառոյցներով։ Քռթենաւորի համար կարեւոր է ճարտասանութիւնը, Նարեկացու համար՝ բանաստեղծութիւնը։ Հայ ներբողագրութեան մէջ Քռթենաւորը նշանաւորում է լեզուի արուեստականութեան եւ վերամբարձութեան բարձրակէտը, Նարեկացին՝ բանաստեղծականութեան»[29]։ Այս ամէնը ճիշտ է, բայց սա ամենեւին

---

[26] Մ. Մկրեան, *Գրիգոր Նարեկացի, էջ 137։*

[27] *Տե՛ս «Հայ միջնադարեան գրականութեան ժանրեր», էջ 159։*

[28] Ա. Ղազինեան, *Գրիգոր Նարեկացի. բանաստեղծական արուեստը, էջ 108։*

[29] *«Հայ միջնադարեան գրականութեան ժանրեր», էջ 159։*

չի նշանակում, թէ պատկերաւորութեան եւ բանաստեղծականութեան հետամուտ Նարեկացու ներբողեանները բանաստեղծական գործեր են. Ղազինեանն ինքն էլ այդ գործերը քննել է իբրեւ «արձակ երկերի գրական տեսակ»[30]։

Ինչպէս Խաչի, այնպէս էլ Աստուածածնի ներբողեանում կայ մի հատուած, որ ունի բանակապ. այդ հատուածի պարբերութիւնների սկզբնատառերով յօգուում է Գրիգոր *անունը (տե՛ս* ՄՀԺԲ, *961)։ Այս դէպքում նոյնպէս բանակապի առկայութիւնն այդ հատուածը չի վերածում բանաստեղծական խօսքի։ Մինչդեռ այս ներբողեանի վերջնամասում եւս Նարեկացին ստեղծել է մի չափածոյ դրուագ, ներբողական բանք՝ կոչելով այն «բան* երգութեան» *եւ* «երգագրութիւն *գովեստի»։ Բերենք այդ բանաստեղծական դրուագը կամ ներբողական-ճարտասանական բանքը, որտեղ, ինչպէս Աղօթամատեանի մեծ մասում, առկայ է ազատ չափի եւ հնգավանկ անդամների զուգակցութիւնը.*

Եւ արդ, ընկալցի՛ս *ըզբան երգութեան*
բերանոյ շըրթանց մերումըս լեզուի՝ Քեզ ի հաճութիւն,
Մաքրութի՛ւն կուսից եւ Սկզբնաշաւե՛ղ,
սրբոյ միայն Ճըշմարտի Տաղաւա՛ր անաղտ,
վերանըկարեա՛ զառ ի յԱւազանէն
անախտ արգանդէ կարդացեալս անուն
ի գիր մատենի վերին դըպրութեանն
եւ *զերգագրութիւն* սակաւամասնեայ մերըս *գովեստի*
անջընջական տառ արձանացո՛
փոխատրեալ մարմնոյս ըզմըրաշարս գիծ
եւ զգայական շընչոյս զբանիս պատկեր,
զի իբր ի գոյից երկուց զուգելոց
ի մի խառնութիւն միոյ կենդանոյ
միշտ փառատրեսցիս սովին օրհնութեամբ,
իբր յանեղծական փառաբանողէ,
եւ ի ձեռն զօրեղ Քոց խընդրուածոց
պարգեւեսցես մեզ անդատապարտ համարձակութիւն
յԱտենի մեծի եւ ահաւորի սուրբ Դատաւորին։
(ՄՀԺԲ, 962)

[30] Ա. Ղազինեան, *Գրիգոր Նարեկացի. բանաստեղծական արուեստը, էջ 102։*

Նարեկացին, Սուրբ Կոյսին ձօնել է ինչպէս գանձեր եւ տաղեր, այնպէս էլ՝ Աղօթամատեանի Զ Բանը, որպէս աղօթական-ներբողական բանք։ Դրանց, ահա, գումարւում է սոյն ներբողական բանքը, որը համալրում է նրա անզուգական մարիամերգութիւնը։

Եռագրութիւնն ամփոփում է հեղինակային համառօտ յիշատակարանը, որը գործի պատվիրատու Ստեփանոս Ապարանեցու խնդրագիր թղթի պատասխանն է։ Իր այս եռամաս երկը հեղինակը համարել է պատուիրատուի իւրօրինակ գովեստ-գովաբանութիւն («շարադրեցի ի վեհիդ գովեստ հիւսուածս բանից») եւ նրա անունը յաւերժացնող իր կերտած յուշարձանը.

«Ես նկարեցի, մատուցի ի գեղ պատկերի դիմաց սոփեստիդ սպիտակափայլ լուսափառ դաշտի քարտինիդ եւ առնանացուցի ի շուրթն գրչիս՝ անշունչ խօսողիս, անքայլ ընթացողիս, անձայն հնչողիս, անդուլ պատմողիս եւ անսայթաքելի քարոզչիս զանուն տենչալի ձերումդ կոչման, տէ՛ր Ստեփանոս, լերինդ Մոկաց հզօր դիտապե՛տ, մնալ յարակայ ի սոյն համառօտագիծ մատենի յաւուրս անթիւս եւ յամս հազարաւորս իմով սակաւամասնեայ իմաստիս»։ *(ՄՀԺԲ, 963)*

* * *

Եռագրութեան մաս չեն կազմում, բայց նրան մշտապէս յարակից են միւս երկու ներբողեանները՝ նուիրուած Քրիստոսի առաքեալներին ու աշակերտներին եւ Յակոբ Մծբնացի հայրապետին։ Այս գործերը, Մ. Մկրեանի գնահատմամբ, «աւելի հռետորական, խոհական բնոյթ ունեն... գրուած են սառը ակադեմիզմով եւ նախորդ երկուսի նման աչքի չեն ընկնում յուզական յագեցուածութեամբ»[31]։ Այս «բաւական խստացուած» բնորոշումը, Պ. Խաչատրեանի կարծիքով, «երեւի ճիշտ է միայն Յակոբ Մծբնայ հայրապետին ընծայուած գովեստի համար, որովհետեւ Առաքեալներին եւ Քրիստոսի եօթանասուներկու աշակերտներին նուիրուած ներբողեանը յատկանշւում է տաղերի ու «Ողբերգութեան մատեանի» հեղինակին բնորոշ զգացմունքային հարստութեամբ ու ջերմութեամբ, չափածոյին բնորոշ ռիթմի խաղացկուն ընթացքով, խօսքի երաժշտականութեամբ ու անակնկալ հակադրութիւն-պատկերներով»[32]։ Արդարացի լինելով, նշենք, սակայն, որ Մ. Մկրեանն իր խօսքի

[31] Մ. Մկրեան, *Գրիգոր Նարեկացի, էջ 138։*
[32] Պ. Խաչատրեան, *Գրիգոր Նարեկացին եւ հայ միջնադարը, էջ 86։*

շարունակութեան մէջ այդ երկու ներբողեանների վերաբերեալ նկատել է, որ դրանց մէջ «թէպէտ բանաստեղծական ներքին բուռն ոգեւորութիւն չի զգացւում, բայց եւ այնպէս խոհերը դարձեալ արտայայտւում են անկաշկանդ ու սահուն եւ այնպիսի ձեւերով, որոնք, կարծես թէ, բանաստեղծի նախապատրաստական վարժութիւնները լինեն՝ իր գլուխգործոցը գրելուց առաջ»[33]։

Յիրաւի, Քրիստոսի առաքեալներին եւ աշակերտներին նուիրուած ներբողեանը համակուած է ջերմ յուզականութեամբ։ Գովաբանական պաթետիկ հնչերանգով է անմիջապէս սկսւում ստեղծագործութիւնը.

«Տիեզերաց ծաղի՛կ եւ տո՛ւնկ տենչալիք տանն Եդեմայ, Ադամայ նախաստեղծին ծնո՛ւնդ եւ զա՛ռմ Սիովնի, ծա՛ռ ամբարձուղէշ բիւրոստեանք, ծիրանածայր ընձի՛ւղք երփնագեղք, քաղցրապտուղք եւ ախորժելիք, երկնընթացք դիտա՛կք ընտրութեան՝ լուսասնունդք եւ տիրահաստատք, շահաւէտք եւ արդիւնականք, առոգեալք եւ արմատացեալք, պարարեալք եւ պանծացեալք ի Յօղոյ Պարգեւողին, ընտրական սերմա՛նք անման բարերոյս անդաստանին, բղխմո՛ւնք հանապազահոսք, մշտակայլակք, յարակայընթացք, գե՛տք հանդարտահետք գերածաւալք եւ գեղածիծաղք, գարնագուշակք, սառնական օդոցն սուգի՛շք եւ դժնդակասիք շնչոյ նահանջի՛շք եւ ապաքինի՛շք, սուրբ եւ երջանկագունդ գումա՛ր դասու առաքելոց»։ *(ՄՀԺԲ, 976–977)*

Առաքեալների, ապա նաեւ Քրիստոսի եօթանասուներկու աշակերտների, որպէս տիեզերքի լուսատուների, աստուածառաք գործի նկարագրութեանն ու պանծացմանը զուգընթաց, ներբողագիրը կատարել է նմանօրինակ մի շարք այլ բնութագրումներ, ինչպէս. «Պայծառափայլ լուսաւո՛րք, ճրագո՛ւնք եւթնաշողեանք, շա՛նթք կիզանողք, ցոլմո՛ւնք ահագինք, հոսա՛նք հրեղէնք, մարզի՛շք մարդկան, բո՛վք ընտրութեան, հալո՛ցք հոգւոց» (ՄՀԺԲ, 978)։

Ինչպէս նախորդ ներբողեաններում, այստեղ առկայ բնութագրումներում եւս կիրառուած է Նարեկացիական խորհրդաբանութիւնը, ըստ որի, առաքեալները կենաց ծառ Քրիստոսից ընձիւղուած ու ծլարձակած ծառեր եւ ծաղիկներ են։ Իր մի գանձում Նարեկացին նրանց կոչել է «գերահրաշ բարունա՛կք՝ յէէն զարգացեալք եւ ծաղկեալք, ո՛տք պտղալիցք»[34]։ Ներբողեանում էլ նրանց բնորոշել է իբրեւ «քաղցրաճաշակ որթոյն

---

[33] Մ. Մկրեան, *Գրիգոր Նարեկացի, էջ 138։*

[34] Հ. Բաղջինեան, *Գրիգոր Նարեկացու Գանձարանը, էջ 152։ «Բարունակք» եւ «ուռք» են կոչւում խաղողաորթի ոստերը։*

բառունակք, *աճունաձիգ* ուտք *վարսաւորք» (ՄՀԺԲ, 982)։ Մէկ այլ գանձում բանաստեղծն առաքեալներին կոչել է «Երիվարք Հեծելոյն եւ հեծանոցք՝ Հարողին զԲելիար»*[35]*. այսինքն՝ սատանայի դէմ մարտնչող Հեծեալ-Քրիստոսի երիվարներ։ Ներբողեանում եւս ասել է. «եւ որպէս զարարչական բանին* երիվարս՝ *զծովածուփ ալիս կոխեցին եւ զվիշապն ապստամբ՝ հզօր մեքենայիւ բանին սանձեցին» (ՄՀԺԲ, 986)։*

Իր այս ներբողեանը եւս Նարեկացին բարձր է գնահատել եւ յիշատակել է Ողբերգութեան մատեանում, առաքեալներին նուիրուած գլխում. «զորոց զգովեստն *արժանաւորութեան, ըստ իմում կարի, առ ի փառս Քո, Տէր ամենայնի,* յայլում բանի *պաշտեցի» (Բան ՁԲ, 10)։*

Առաքեալների առաջին իսկ փառաբանութիւն-գովեստից յետոյ հեղինակը գրել է մի երգուող դրուագ, որի սկզբում եւս գործածելով երգ եզրոյթը, ասել է. «Եւ արդ, ձօնեսջիք երգոյս բանի *շնորհ ի մաղթանաց ձերում հայցուածոց՝ զարժանապատիւս ձեր տէրութիւն գերահռչակել»։ Ստորեւ բերուող այդ դրուագում եւս զուգակցուած են ազատ չափն ու հնգավանկ անդամները.*

Քանզի ի վեր քան ըզճառ շըրթանց
եւ զիմաստական բանի զօրութիւն՝
շուտ եւ զարդ գեղոյ ճոխութեան ձերում բարձրութեան
չըբնաղապէս գերահըռչակի։
Եւ եթէ ոչ հրաշալի գրեսցի լըսողաց,
մերկասցի, բաց ի բաց երեւեսցի ծածուկ ծոցոյ բանիս,
անեղծականս ճառել զստեղծեալսըդ ժամանակաւ,
եւ գըրեալս շնորհօք որդիք էութեանն.
եւ թէպէտ եւ ոչ անժամանակք ըստ Անսահմանին,
այլ սկիզբըն գոյից յաւիտեանց,
իբր հիմն ժամանակաց սկըսեալք,
ընտրեալք նախ քան զեղանիլ էից աշխարհի՝
ըստ բարբառոյ ձայնին Պօղոսի։

Քանզի որպէս Սիովն վերին երկնային՝
սկըզբնամեծար եւ կանխակառոյց մայրն ազատ, մաբրածին,
նոյնպէս եւ որդիք նորին անդրանիկք եւ հոգեպայծառք
ի սկիզբըն ծայրից անչըրպետ եզերաց

[35] *Նոյն տեղում, էջ 89։*

ընդարձակ ամաց միջոցի աստուստ նըկատեալ,
ի գրութեան մատենի Բանին նըկարեալ,
փառօք բարձրութեան շնորհին պատկերեալ,
անստուերական փայլմամբ բարերարըն Հօր կերպացեալ,
անհաւասար համարձակութեամբ ստորիցըս ստեղծագործեալ,
մասնակից կրօնից օծութեամբ Փըրկչին ձեռնադրեալ,
յանգունակիցք խըմբից անմահիցըն դասուց պարակցեալ։
(ՄՀԺԲ, 976–977)

Առաքեալներին եւս Նարեկացին ձօնել է գանձեր, ինչպէս նաեւ Աղօթամատեանի ՁԲ Բանի մի հատուածը, որպէս ներբողական բանք։ Դրանց, ահա, գումարւում է այս հատուածը, որ նոյնպէս ներբողական բանք է։

* * *

Յակոբ Մծբնացուն նուիրուած ներբողեանն, ինչպէս նշեցինք, վարքագրական-սրբախօսական բնոյթի է։ 4-րդ դարում ապրած եւ համաքրիստոնէական սուրբ հռչակուած Յակոբ Մծբնացու վերաբերեալ տեղեկութիւններ է հաղորդել յատկապէս Փաւստոս Բուզանդն իր Պատմութեան մէջ (գլուխ Ժ), ըստ որի Յակոբը Մծբինի մեծ եպիսկոպոսն էր. ապրել է ճգնակեաց կեանքով։ Այցելել է Հայաստան, բարձրացել Արարատ լեռը եւ Տիրոջ հրեշտակից ստացել փրկարար Նոյեան տապանի փայտի մի մասունք։ Հետագայում եւս գործել է Հայոց աշխարհում։ Մասնակցել է Նիկիոյ տիեզերական ժողովին։ Նրան պաշտել են իբրեւ Քրիստոսի առաքեալի, վերագրել բազում հրաշագործութիւններ։

Նարեկացին Բուզանդի եւ այլ աղբիւրների հետեւութեամբ Մծբնացու կեանքի դրուագները իւրովի շարադրել է իր ներբողեանում, որը կազմել է այդ ժանրի տեսութեամբ հրահանգուած «պահանջների լիակատար հետեւողութեամբ»[36]։ Իբրեւ Նարեկացու ճարտասանական արուեստի բարձր օրինակ, Ա. Ղազինեանն առանձնացրել է ներբողեանի այն հատուածը, որտեղ հեղինակը ծաւալուն համեմատութիւն կազմելով՝ պատկերել է մեղսալից աշխարհն իբրեւ ալեկոծուող ծով.

«Զաշխարհ իւրայովքս պատկեր ծովու ծփեալ ի բազմաց, ո՛չ լուծական ալեօք կոծեցեալ, այլ ի զանազան պատահմանց շարժեալ, ախտիւ

[36] Ա. ՂԱԶԻՆԵԱՆ, *Գրիգոր Նարեկացի. բանաստեղծական արուեստը, էջ 109։*

զայրացեալ, մեղօք պղտորեալ, յեղանակօք այլայլեալ, եւ ընդդիմակայ ներհակօք զիրեարս բախեալ։ Ոմն յաղթէ, եւ ոմն պարտի, փախնու, արշաւէ յանապատէն սահման, եւ անդէն նհանջի։ Իբր գումար կենդանի զօրաց՝ միմեանց պատահին, եւ անդրէն ցրին, խակտին, լուծանին։ Իբրեւ ազինք զանազան ազգաց ի զուր խռովելոց յերկրէ կորուսեալ, անշնչապէս բարբառին, անձայն աղաղակեն, անխորհրդաբար խիզախեն. կեան եւ ոչ երեւին, գոն եւ ոչ էանան, են եւ ոչ ճանաչին, մնան եւ ոչ տեսանին»։ *(ՄՀԺԲ, 996)*

Այստեղ աւելի քան զգայելի է «Մատեան ողբերգութեան» ճարտասանական-բանաստեղծական երկի ապագայ հեղինակը, որն այդ ստեղծագործութեան մէջ եւս ստեղծել է ծովի սքանչելի պատկերներ...

Ուշագրաւ է, որ ներբողեանի այլաբանական ծովին վերաբերող հատուածից մէջբերումը Ա. Ղազինեանն, իրաւամբ, ներկայացրել է արձակ, իսկ Մ. Մկրեանը՝ տողատուած[37]։ Վերջինս չափածոյ է ներկայացրել նաեւ Մծբնացու ներբողեանի մէկ այլ հատուած, ինչը նոյնպէս ընդունելի չէ։ Մինչդեռ Մծբնացու ներբողեանում, աւելի քան միւսներում, առկայ են իսկապէս չափածոյ, յանգաւոր եւ առաւել ընդարձակ դրուագներ։ Որքան էլ այդ դրուագներն ընդարձակ են, սակայն հարկ ենք համարում դրանք եւս, նախորդների նման, բերել ամբողջաբար, որպէս, առաջին անգամ, բանաստեղծական ձեւի մէջ կատարուած հրապարակումներ։

Առաջին դրուագը, որ բաղկացած է տարբեր յանգեր ունեցող չորս մասերից, ներբողագիր-բանաստեղծը սկսել է «Աստանօր առ սմին բանի ի սոյն միութիւն զուգափայլութեան» վերտառութեամբ։ Առաջին մասը հիւսել է -եալ *յանգով եւ ազատ չափով.*

Ի շառափղէ ելեալ,
ի գեղեցկաստեղն ոստոց ընձիւղեալ,
ի նախնեացըն բուսեալ,
ի հարցըն վեհից երեւեալ,
ի տոհմէ հըզօրէ յայտնեալ,
ի պարագըլխէն արդարոց ծագեալ,
Աբրահամեան գոգովըն գըգուեալ,
ի վերուստ անտուստ վրկայեալ,
ի յամպոց մաքրոց անձրեւեալ,

[37] *Տե՛ս «Հայ միջնադարեան գրականութեան ժանրեր», էջ 158,* Մ. Մկրեան, *Գրիգոր Նարեկացի, Երեւան, 1955, էջ 138։*

ի նորոգ գոյութեանց ցօղեալ,
ի յելիցն արեւու փայլեալ,
յեղեմեան դիմացն ընտրեցեալ,
ի գըլխոց տարածման երկրի պարգեւեալ,
յաջողակն հողմոց զօրացեալ,
յակնարկութենէ Բարձրելոյն բերեալ,
ի հարուստ դարուց նըկատեալ,
Հոգւով Աստուծոյ օծեալ,
ի կամաց էին կոչեցեալ,
ի պատճառին Բանէ հիմնացեալ,
ի պարգեւէն լուսոյ յարդարեալ,
ի Պսակողէն վըկայից հաստատեալ,
ի Բարերարին բերանոյ օրհնեալ։

Երկրորդ մասը հիւսուած է -ան *յանգով եւ գերիշխող հնգավանկ չափով.*

Անունն՝ խորհրդական,
կրօնքըն՝ վերնական,
վարքըն՝ մաքրական,
ընթացքն՝ հրեշտակական,
կոչումըն՝ գովական,
նըկատումն՝ ուղիղ, միական,
շաւիղն՝ աստուածական,
կիրքն՝ անհասական,
աւանդն՝ անշարժական,
սէրն՝ անկեղծական,
լոյսն՝ անշիջական,
հաւատքն՝ անապական։

Երրորդ մասը հիւսուած է -աց *յանգով եւ գերիշխող տասնավանկ չափով.*

Մինըն յաղթական խըմբից հազարաց,
բարեհամբաւըն ի ժողովս ազանց,
անուանին ի կոյտըս բազմաց,

արձանագրեալն ի մատեանըս ազգաց,
ցրողըն աներեւոյթ գազանաց,
ախոյեանն դիմամարտիկ զօրաց դիւաց,
քառամանեակըն Գեղեցկին լանջաց,
նետըն՝ Արարողին կապարճաց,
աղեղըն՝ լարեալ Յաղթողին գըրկաց,
քարըն պարսից՝ Տէրունւոյն ձեռաց,
գայիսոնն ընտիր՝ Հըզօրին կամաց,
գերակացեալըն աշխարհիս մասանց,
անկըցորդըն պարտեաց մեղանաց
անունակըն նիւթոյ յանցանաց,
տարր օրինակըն մարմնաւորաց։

Չորրորդ մասը հիւսուած է -ի յանգով եւ անկանոն չափով.

Լոյսըն՝ ծագեալ ի ստորին երկրի,
ակըն արեւու՝ ի մէջ աշխարհի,
աննմահամայն իսկապէս՝ ի հողեղինի,
միջնորդ կենդանի դատողին բանի,
ծիր նըհանջման՝ վըշտաց տագնապի,
սահման կենաց՝ յընթացըս ախտի,
Ահարոն երկրորդ՝ նորս Իսրայէլի,
ապաքինիչ մահու՝ ի խունկ բուրաստանի,
նըշանակ կենաց՝ ի մահու սաստի,
ցանկ շընչական՝ սատակման վըճռի,
բըժըշկապետ մարմնոց՝ յօդեալ ընդ հոգի,
հրաշացեալ գեղով՝ ի դէմըս կերպի,
զօրութիւն ազդման՝ ի տուր հագագի,
նըշոյլ փըրկութեան՝ շնորհացն Յիսուսի։
(ՄՀԺԲ, 992–993)

Այս քառամաս չափածոյ դրուագը եւս Նարեկացին նշել է նուագք *ցուցիչով՝ ասելով. «Արդ, այսքանեօք* նուագօք *ի զանազանակ մասունս բանի յաւէտ պսակեալ, երջանի՛կդ ի գումարս գնդի հայրապետական մեծարեալ դասուն, ընտրեալ տէր սուրբ Յակո՛վբ»։ Այստեղ հեղինակը ակնարկել է նաեւ, որ նման* նուագք-*չափածոյ դրուագներ կան նաեւ իր*

այդ ներբողեանի տարբեր մասերում («ի զանազանակ մասունս բանի»)։ Ստորեւ բերուող դրուագը հիւսուած է -աւոր *յանգով եւ գերիշխող տասնավանկ չափով.*

Եւ ի դամբանի գոլով երկրաւոր,
ընդ Բարձրելոյն գրտաւ միաւոր.
եւ մինչ էր յերկրի իսկ կենդանաւոր,
եղեւ անձնաւոր մըշտընչենաւոր.
եւ ի խիստ վարըս կրօնաւոր
վայելչապէս գոյր պըսակաւոր.
եւ անպատըսպար գաւազանաւոր,
հոգեզրահ շնորհիւ զինաւոր.
եւ հասարակաց գոյի նիւթաւոր,
մարմնացելոյ Բանին կերպաւոր.
եւ ստորիցս աստեաց՝ անկարօտիցն յանգունաւոր,
եւ մըսապատ գեղ պատկերաւոր՝
ըստ արփիաբնակ խըմբին լուսաւոր.
եւ մաբրակենցաղ վարուք ճըգնաւոր,
բազմաժառանգ որդւովք պըտղաւոր.
եւ ընդ երկնային ձըրից պատմաւոր,
արքայութեան Տեառն աւետաւոր.
եւ համօրէն սեռք՝ բանաւոր,
իսկ նա՝ կըրկնակի շընչող հոգեւոր.
եւ այլք՝ կայսերաց հրովարտակաւոր,
նա՝ ի վերուստ մեզ պատգամաւոր.
եւ մարգարէից հետոց ուղեւոր,
հըզօրապէս փառօք թագաւոր.
եւ տընանկօրէն կըրիք տըխրաւոր,
ընդդէմ վըշտաց մահու ահաւոր.
եւ ի դադարման եղծման շիրմաւոր,
արարչական Բանին սպասաւոր.
եւ թշուառապէս երկրի աստ վտանգաւոր,
ընդ Քրիստոսի սիրով երկնաւոր.
եւ միակի մերովս աղցաւոր,
յոբնապատիկ պատուով բիւրաւոր։
(ՄՀԺԲ, 995)

Իր այս ինքնաբուխ չափածոյ խօսքի վերաբերեալ ներբողագիր-բանաստեղծն անմիջապէս յետոյ ասել է. «Եւ արդ, յիրաւի զայսքանեաց դրուագս բղխման բանին այսր դասեցի, քանզի ամենայնիւ բարգաւաճեցաւ վերաճառելովքս տիրապէս՝ քան թէ մարդկապէս»։ Եւ շարունակել է դարձեալ չափածոյ՝ -ի յանգով եւ հնգաւանկ չափով.

Յընթացրս բանի,
յազդումըն ձայնի,
ի հրաման սաստի,
ի համբաւ բարի,
յատեանս հրապարակի։
(ՄՀԺԲ, 995)

Յաջորդ պարբերութիւններից մէկում եւս կան այսպիսի չափով երկու միջանկեալ փոքրիկ դրուագներ, որոնցից մէկն ունի -իր յանգը, իսկ միւսի տողերն աւարտւում են ք տառով.

Առ ծովն երկնալիր,
առ տապանն ամենակիր,
առ այրն աստուածընտիր,
առ կամսն անպատիր,
առ ուղիղ հաւատոյն խընդիր,
առ խորհուդն ճառագիր,
առ դիմակսն ամենադիր,
առ եղական պատկերին իր։

Ոչ վայրապար ընթացք,
ոչ անկայուն միտք,
ոչ վրիպակ հետք,
ոչ սասանեալ սիրտք,
ոչ անխրատ երիկամունք,
ոչ շիջեալ իղձք...
(ՄՀԺԲ, 998)

Ներբողեանի վերջում եւս առկայ է մի չափածոյ դրուագ՝ երկու մասերով։ Առաջին մասը հիւսուած է -ի յանգով եւ խառը չափերով, երկրորդ մասը՝ -աք յանգով եւ դարձեալ խառը չափերով.

Այս՝ նահատակ յաղթող՝ այսըր հանդիսի,
այս՝ սպառազէն արի՝ այսըմ ճակատու,
այս՝ մարտիկ բարեփառ՝ այսմ ասպարիսի,
այս՝ վրկայ ճըշմարիտ՝ այսըմ պարգեւի,
այս՝ աթոռակալ խընկելի՝ այսմ վեհագունի,
այս՝ պետ պանծալի՝ այսր աստիճանի,
այս՝ դատաւոր դըրուատեալ՝ այնմիկ ատենի,
այս՝ պսակաւոր պայծառ՝ այնր հրապարակի,
այս՝ որդի պերճալի՝ այնըր քաղաքի,
այս՝ ժառանգ պըճնեցեալ՝ այնմ Երուսաղէմի,
այս՝ կամարար օրհնեալ՝ Հօրըն Քրիստոսի։

Զսա յիշատակեցաք,
զսոյն բարձրացուցաք,
սովիմբ աղօթեցաք,
կաճառ կացուցաք,
պարըս խըմբեցաք,
լապտերըս լուցաք,
եղրս անուշութեան մատուցաք,
կանթեղս աստեղօրէն վառեցաք,
հուր խորհրդական ընդ խունկ խառնեցաք,
սովիմբ լուսաւորեցաք,
սովաւ բըժըշկեցաք,
սովին ել մահու ընկալաք։
(ՄՀԺԲ, 1004)

Այս վարքագրական-սրբախօսական ներբողեանն, իր չափածոյ բանքերով հանդերձ, մեծարժէք եւ թերեւս միակ գեղարուեստական երկն է, որտեղ պանծացւում է հայ Եկեղեցու եւ հայութեան համար նուիրական սրբերից մէկը՝ Յակոբ Մծբնացի հայրապետը։

Ներբողագրութեան ասպարէզում եւս Նարեկացին մեծ նորարար է՝ թէ՛ բովանդակութեան, թէ՛ ձեւի առումով։ Ներբողուող առարկան նա, նախորդների համեմատ, ներկայացրել է առաւել իրական-զգայելի, առաւել յուզական ու խոհական, ճարտասանական խօսքն առաւել մերձեցրել բանաստեղծութեանը եւ ներբողեանների մէջ ներմուծել չափածոյ

դրուագներ։ Նրա ուղղակի եւ բարերար ազդեցութեամբ բուռն ծաղկում է ապրել հետագայ հայ ներբողագրութիւնը, ստեղծուել են ինչպէս չափածոյ դրուագներով օժտուած, այնպէս էլ լիովին չափածոյ, բանաստեղծական ներբողներ։

Նշեցինք, որ իր եռագրութիւնը Նարեկացին ստեղծել է իբրեւ Ստեփանոս Ապարանեցու յիշատակը յաւերժացնող յուշարձան։ Ըստ էութեան, այդ երկը՝ միւս երկու ներբողեանների հետ միասին, իր իսկ՝ Գրիգոր Նարեկացու անմահութեան յուշարձանն է՝ նրա Գանձարանի եւ Աղօթամատեանի հոգեւոր յուշահամալիրի կազմում։

РЕЗЮМЕ

Великий армянский поэт средневековья Григор Нарекаци является автором произведения, известного под названием «Повествование Святого Креста Апаранка». К этому хвалебному историческому очерку в прозе автор добавил два панегирика, создав своеобразную и ценную трилогию. Один из них посвящен Святому Кресту, другой — Святой Богородице. Известны также два других панегирика Нарекаци, один из которых посвящен апостолам и ученикам Христа, второй — Святому Акопу Мцбинеци (V века).

По жанровому требованию панегирика произведения такого рода создавались по правилам риторического искусства, используя образный язык и эмоциональную выразительность, и являются образцами художественной прозы данного времени. Как лирике, так и некоторым отрывкам этих произведений присущи ритмика, мелодичность, напоминающие рифмы повторяющиеся окончания слов и даже акростихи. Такие отрывки, однако, хоть и приближаются к стихотворениям, но не являются ими, как иногда представляют их некоторые исследователи. Панегирики Нарекаци, созданные пером гениального автора, проникнуты более красочными образами и несравненно более глубоким накалом чувств. Они как по форме, так и по содержанию являются новшеством в армянской панегирической литературе и лучшими образцами этого жанра. Тем не менее эти произведении также не являются стихотворениями и остаются в области риторической прозы.

Одним из главных новаторств Нарекаци в панегириках стало то, что он специально прерывал их, вставляя истинно поэтические фрагменты. Они представляют собой риторические-панегирические стихотворения, жанр которых основал сам Нарекаци.

Трилогия Нарекаци вместе с остальными двумя панегириками является третьим крупным художественным произведением из наследия автора, после его бессмертного Молитвенника («Книга скорбных песнопений») и «Гандзарана» (гандзи: литании; таги: песни). Благодаря прямому и благотворному влиянию великого поэта впоследствии бурно расцвела также армянская панегирическая литература. Появились как панегирики со стихотворными фрагментами, так и чисто поэтические произведения этого жанра.

SUMMARY

Great medieval Armenian poet Gregory of Narek is the author of the work known as “Narrative of the Holy Cross of Aparank”. The author attached two panegyrics in prose to this laudatory historical essay in prose creating a peculiar and valuable trilogy. One of them is dedicated to the Holy Cross, the other – to the Holy Mother of God. Gregory’s two other panegyrics are also known: one of them is dedicated to Christ’s apostles and disciples, the second one — to the 4th century saint James of Nisibis.

According to the panegyric genre requirements, this kind of works are created by the rules of rhetoric art with the use of figurative language, emotional expressiveness and are considered to be examples of artistic prose of the time. Rhythm, melody, rhyme-like repetitions of word endings and even acrostics are inherent in both the lyric poetry and some passages of these works. Such passages, however, come close to the poems, but they are not, as some researchers sometimes present them. The panegyrics of Gregory of Narek, penned by the brilliant author, are imbued with more colorful images and an incomparably deeper glow of feelings. Both in form and content, they are innovations in the Armenian panegyric literature being the best examples of this genre. Nevertheless, these works are not poems, either, and remain in the field of rhetorical prose.

One of the main innovations of Gregory in panegyrics is that, as a rule, he deliberately interrupted them by inserting truly poetic fragments. They are rhetorical and panegyric poems, a genre founded by Gregory himself.

The trilogy of Gregory of Narek, along with two other panegyrics, is the third major work of art in the author's legacy, after his immortal "Book of Lamentations" and Gandzaran (gandz-litany and tagh-song). Thanks to the direct and beneficial influence of the great poet, the Armenian panegyric literature also flourished subsequently. Both panegyrics with poetic fragments and purely poetic works of this genre were created.